ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/234

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8806-2022 գրությամբ «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.05.2022թ. թիվ 01/14439-22 գրության հիման վրա, 16.05.2022թ. թիվ 26/26-1/8806-2022 գրությամբ նախաձեռնել է «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ֆոռտունա 4» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ֆոռտունա 4» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ֆոռտունա 4» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/234 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:58-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2022թ. թիվ 01/14439-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/145» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Վերը նշված գնման Ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգեր) շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության հ.526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները և Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերությամբ՝ առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից՝ Ձեզ է տրամադրվում Մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/234 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 10:58-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/234 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/234 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նստարանների, աղբամանների, լուսավորման համակարգի և շատրվանի համար ջրի պոմպի /տեղադրումով/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/145» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ արտադրողի անվանումը լրացված չէ, իսկ տեխնիկական բնութագիրը լրացված է թերի «ձեռքբերում /պատրաստում/ և տեղադրում: Կից ներկայացնում ենք նախագիծը» բառերը բացակայում են:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընթացակարգի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգի

միջոցով չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8806-2022 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 06.05.2022թ. թիվ 01/14439-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նստարանների, աղբամանների, լուսավորման համակարգի և շատրվանի համար ջրի պոմպի /տեղադրումով/ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/145»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը՝ արտադրողի անվանումը լրացված չէ, իսկ տեխնիկական բնութագիրը լրացված է թերի «ձեռքբերում /պատրաստում/ և տեղադրում: Կից ներկայացնում ենք նախագիծը» բառերը բացակայում են:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ընթացակարգի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով չեն շտկվել և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն արձանագրված անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ն «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/145» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.05.2022թ. թիվ 26/26-1/8806-2022 գրությամբ «Ֆոռտունա 4» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**